ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ 2008Թ. ՄԵԿԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԼԱՆԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

ԽՆԴԻՐ 1

ՀԵԻԱ-ի կադրային քաղաքականության զարգացում:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 1.1

Աշխատակազմի աշխատանքի գնահատման չափանիշների մշակում:

Մշակվել է աշխատակազմի աշխատանքի գնահատման չափանիշներ:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 1.2

Աշխատակազմի աշխատանքի գնահատման մշակված գործիքի կիրառում:

Մշակված աշխատանքային գործիքը չի փորձարկվել ֆինանսական միջոցների անբավարարության պատճառով:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 1.3

Կարգապահական և խրախուսման համակարգի զարգացում:

Մշակվել են աշխատակազմի կարգապահական և խրախուսման մեխանիզմները:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 1.4

ՀԵԻԱ-ի աշխատակազմի համալրման արդյունավետ մեխանիզմի մշակում և կիրառում:

ՀԵԻԱ-ի աշխատակազմի համալրման արդյունավետ մեխանիզմները չեն մշակվել և չեն կիրառվել ֆինանսական միջոցների անբավարարության պատճառով:

ԽՆԴԻՐ 2

ՀԵԻԱ-ի ներքին ավանդույթների և ներկազմակերպական մշակույթի վերակենդանացում և զարգացում:

2008թ. դեկտեմբերի 19-ին ՀԵԻԱ-ի նորընտիր վարչության առաջին նիստի ընթացքում վերակազմակերպվեցին ՀԵԻԱ-ի հանձնաժողովները և ակումբները: Նշանակվել է ՀԵԻԱ-ի մշակութային ակումբի ղեկավար: Ակումբի առաջիկա ծրագրերից մեկը՝ ՀԵԻԱ-ի ներքին ավանդույթների և ներկազմակերպական մշակույթի վերակենդանացման և զարգացման ուղղությամբ տարվող միջոցառումներն են լինելու:

ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԽՆԴԻՐ 1

ՀԿ-շահառու հետադարձ կապի մեխանիզմների մշակում և կիրառում (շահառուների կարծիքների և տեսակետների հավաքագրում):

ՀԿ-շահառու հետադարձ կապի մեխանիզմների մշակման և կիրառման նպատակով հնարավորության սահմաններում հավաքագրվել են շահառուների կարծիքները և տեսակետները: Սակայն ՀԿ-շահառու հետադարձ կապի մեխանիզմները դեռևս չեն մշակվել և կիրառվել ֆինանսական միջոցների անբավարարության պատճառով:

ԽՆԴԻՐ 2

Տեղեկատվության կառավարման համակարգի զարգացում:

Միջոցառում 2.1

Տեղեկատվության կառավարման մեխանիզմների մշակում:

Տեղեկատվության կառավարման մեխանիզմները գտնվում են մշակման փուլում և նախատեսվում է դրանք ավարտել առաջիկայում:

Միջոցառում 2.2

Տեղեկատվության կառավարման մեխանիզմների կիրառում ՀԵԻԱ-ի ծրագրերի և ծառայությունների արդյունավետության բարձրացման նպատակով:

Տեղեկատվության կառավարման մեխանիզմները ՀԵԻԱ-ի ծրագրերի և ծառայությունների արդյունավետության բարձրացման նպատակով դեռևս չեն կիրառվել՝ վերջնական պատրաստ չլինելու պատճառով,